

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ

Ե . ԹՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է

գրուելու պէտք է ուղղել առ

Տեղիւն ԱՐՇԱԼՈՅՍ րազրի

ԳԱՀԻՐԷ (Նստակաւարի)

Թիւ


E. TOROSSIAN

Direct.-prop. du journal arménien

ARCHALOUICE

LE CAIRE (EGYPTE)

Boite Postale No.



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դրանկն.	60
Վեցամսեայ »	35
ՕՃԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Տրուսի	20
Վեցամսեայ »	12

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԿԻԿ Եւ թղթատարի ծախքը Խնդրագրութեան վրայ է :

Խնդրագրութեան ուղղութեամբ գրութիւնք էս չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ Կանխիկ վճարելի են

ԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՅՍ

Բ - ՏԱՐԻՈՅ

Մեր ներկայ թուով կ'սկսինք Արշալոյսի Բ . տարին և ինչպէս ասկէ առաջ ծանուցած ենք, հաստատութեամբ պիտի շարունակենք մեր ուղին :

Մեր Պատ . բաժանորդներէն անոնք որ պիտի շարունակեն ընդունել Բ . տարւոյ թերթերը և անոնք որ նոր բաժանորդագրուելի կ'ուզեն, թող հաճին ծանուցանել մեզ գրաւոր կամ բերանացի :

Աւելորդ պիտի ըլլայ ըսել թէ՛ թերթին գոյութիւնը և յարատևութիւնը վերջնապէս կ'ապահովուի, երբ մեր ջանքերուն կը միանայ մեր արդոյ ազգայնաց գործնական քաջակերութիւնը :

ՏՆՈՐԷՆՈՒԹԻՒՆ

ՏՊԵԱԼ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Չեղեակներու կամ չ'պիտցածներու պարբերական վեր խմբագրական խառնաչիփ գրասենյակին վրայ կը պատկեն աչքերս երբ յանկարծ երևաց նա :

Չ'եմ կրնար յիշել հիմակ թէ՛ ինչո՞վ զբաղեալ էր միտքս այս պահուն, երբ անոր դօտիին նուրբ ու վայելչագեղ երկտող ձեռագիրը իմ ուշադրութիւնս գրաւեց :

Գրքոյկ մը ըլլալու էր, որին կողքին ճակատը գրոջմուտ «Ազգային» առաջին բառը տեսակ մը ցուրտ սարսուռ պիտի տար ինձ, եթէ՛ անոր անմիջապէս կցուած սաքանի մը բառերը չ'լինէին. — ԿՐԹԱՐԱՆ ՈՐԲԱՆՈՅ Ի ԿԻՊՐՈՍ :

Եւ արդարեւ որի՞ համար այնպէս չ'էին. ե՞րբ արգեօք՝ շատ աննշան բացառութեամբ, մեր Ազգային բոլոր հաստատութիւնները պահած են իրենց մէջ ոգեւորիչ շունչ մը և տաք հրապոյր մը. հոս, Գալստեան՝ Վարժարանը՝ կամ եկեղեցագատկան հաստատութիւնները արգեօք :

Յուսացինք թէ՛ Կիպրոսի Կրթարան Որբանոցը մեր այս կարգերէն չ'լինիր . սակայն ուրիշներ . ո՞րպիտի պարծենկոտ օգտակարութիւններով օժտեալ են դէպի ժողովուրդը և ժողովուրդը դէպի այդ հաստատութիւնները :

Այս դրական մտածման դատաստանէն յետոյ՝ իր արժանաւոր տեղը գրաւելու մը

տօք անշուշտ զրկուած էր մեզի այս գրքոյկը, որով ց'այն վայր չ'հետաքրքրուիլը ինձ համար ներքի չ'էր. հետեւաբար պատուեցի գօտին ու անգամ մ'ալ արհեստակցի նախանձոտ աչքով դիտեցի կողքը վերէն վար :

Վիէննայի փառապանծ Տպարանի դրօշմը կը կրէր գրքոյկը, զոր ձեռքը առնողը խորախորհուրդ երկեղածութիւն մը կը զգար յանձին այն մեծալեւորին որ այնքան ջանքերով մեր գրականութիւնը կանգնեց ու ծաղկեցուց :

Առաջին թուղթը դարձուցի և փութկոտներու անհամբեր աճապարանքով լոկ իր յառաջաբանին քանի մը տողերը կարդալէս յետոյ, գրքոյկի ամբողջ թուղթերը մէկ անգամով ձեռքս մէջ խշրտացին. կուզէի աւելի շուտ, է՛նկարեւոր պարունակութիւնը մէկ անգամէն գիտնալ . սակայն ինձ կը թուէր թէ աւելին ալ անհրաժեշտ գիտելիքներ էին և ամենն ալ տեղն ու տեղը առանց փայլ կամ զարգարանքի՝ իսկական նկարագիրներ էին :

Գրքոյկը, ինք իր պարզութեամբ արդէն կը մատնէր իր ներքինը, ինչպէս գեղեցկի մը ժպիտը կը մատնէ իր ներսը . Սիրտը, որբերու հոգին ու շունչը կ'իշխէր իմ վրայ. անձայն պարտաւանք մը կը ճնշէր զիս, որպէսզի զայն չ'թողուի և արդարեւ չ'թողի. կարդալով, հաշուելով, բազդատելով և մանրակրկիտ քննելով պարունակութիւնը :

Կրթարաններու է՛ն անհրաժեշտ եղող մաքրասիրութիւնը, մինչև իսկ բազմիքը, օգտափութութիւնը, բժիշկը, դեղորայքը, որք ուղղակի առնչութիւն ունին աշակերտելոց առողջական ամենակենսական պիտոյից, Կիպրոսի այդ հաստատութեանը մէջ երբէք զանց չ'են եղած և այս ամենը ստուգիւ անուրանալի պարծանք մ'է զայն վարող մարմնոյն ինչպէս և բոլոր Հայերուս երբ յանկարծ ըտպէի մը մէջ մտքի առջև ունենանք թէ՛ կրթարան Որբանոցի մէջ որբեր ունինք :

Գասաւանդութեան ճիւղին մէջ մայրենի լեզուն՝ կրօնքը, պատմութիւնը, աշխարհագրութիւնը, թուաբանութիւնը, իր յարակից ճիւղերով, ինչպէս թուրքերէնն ու Անգլիերէն դասախօսութիւնները, ժամանակիս պահանջին ոչ նուազ կարեւորը ըլլալու տեսակետով, այդ յարկին մէջ աշակերտաց աւանդուած են ու կ'աւանդուին . և այս ամենուն հետ աշակերտաց ցոյց տուած ըզգալի յառաջդիմութիւնը և մինչև իսկ այժմէն ընթացաւարտներ ունենալը՝ արժանա

ցած է խղճամիտ անձնաւորութեանց վկայութեանց և շնորհաւորութեանց, որք արդէն անձամբ անձին ներկայ եղած և իրենց գոհունակութիւններովը այդ փոքրիկները սրտովին քաջալերած և մխիթարած են :

Եւ այս ամենը՝ անաչառ դատաստանաւ, պարծանք կրնանք ընդունել մեծ գրաւականներ Կիպրոսի Կրթարան Որբանոցի ներկային և ապագային համար :

Գալով արհեստական ճիւղին, այս շրջանին մէջ ալ ի գործ դրուած եւ մանկական անմեղունակ ձեռներով հրաշքներու գասաւորութեամբ արտադրուած եւ կրկին կրթարանի պէտքին գործածուած են . որպիսիք են, դերձակութեան եւ կօշկակարութեան արհեստները :

Թէ ինչո՞վ և ի՞նչպէս եղած են այս ամենը Կիպրոսի Կրթարան-Որբանոցին համար : Ըստ մեզ, զօրաւոր կամքի և ժողովրդի նուիրատուութիւններու զուգընթաց տիրապետութեամբ :

Բայց թէ ո՞ւր հաստատուած է Կրթարան-Որբանոցի այդ տիրապետութեան ամուր խորիտը իբր անառիկ ապահովութիւն . հարկ չ'կայ ասոր պատասխանելու . վասնզի ամեն ոք գիտէ թէ՛ Կրթարան-Որբանոցը նախ ի Մանչէսթըր բարձր խնամակալութիւն մը ունի, որոյ ազնիւ ու վեհանձն պարտաճանաչութիւնը շատ աւելի գերիվեր է, յաճախ մեր ընտրած կենսական անձանց անհաւատարիմ գիտակցութիւններէն . և երկրորդ՝ վասնզի այդ բարձր խնամակալութեան ստանձնած բարոյական մեծ հոգը ո՛ր և է կերպով երբէք թոյլ չըտար մեր որբ եղբայրիկներուն ներկայն ու ապագայն նուազ պարտաճանաչ անձանց խնամոց և հոգածութեան յանձնել կամ ենթարկել . հետեւաբար այս երկու մարմնոցի գործ դրած մեծ մեծ ջանքերն ու խնամքները այնքան գեղեցկափայլ արդիւնքներով, ամենակատարեալ ապահովութիւններ են բոլոր Հայերուս համար թէ՛ մեր ըրած նուիրատուութիւնները իրենց փափաքելի արդիւնքներէն ամենէն զուրկ չ'պիտի ըլլան :

Ուստի կարգն է հիմա յիշեցնելու թէ՛ ո՞ւր մնացին այն աղաղակները . որք լրագրական սինակներու մէջ շփոթ ու անանուն գոյներով հրաւէր կը կարգային, օգնե՛նք, օգնե՛նք ըսելով :

Ուր են Գահիրէի այն ընկերութիւնները՝ որք իրենց որբանամ որբասէր անուանց եռանդուն պաշտպանութեամբ, այսօր քան ազգօգուտ հաստատութեան մը երբէք չ'օգտուեցան :

Որքեր կան, որքեր ունինք. հարիւրսւ-  
ւոր, հազարուոր, մերկ են և անպատասխար.  
Եւր են արդեօք ջերմաձերմ այդ կոչմանց  
նախակարասպանները :

Երբ է լուին քաջալերութիւնը՝ և ար-  
ժանաւորին փառքն ու վարձատրութիւնը :

Մենք՝ ժողովուրդքս, անտարբեր ենք.  
բայց պէտք է՛ որ ա՛լ անտարբեր մնանք :

Մատղաշ տղեկներու համբերատար հոգ-  
ւոյն վէրքերը՝ օր օրի կ'արիւնտօխն և երբ  
ընազդը՝ նոր նոր վերյուշումներով յիշեցնէ  
իրենց թէ՛ իրենք հայր մայր չ'ունին, մեռած  
մեռցուած են, և ժողովրդի գորովալիր սէ-  
րը հասարածէ զիրենք ի մի վայր իրենց բու-  
լորին հայր մայր ըլլալու. ահա անոնց գողտ-  
րիկ գագոնմներուն հուժկու յորգումին  
առջև, մենք՝ ժողովուրդքս, երբէք ան-  
տարբեր ըլլալու չ'ենք :

Ի՞նչ կարող չենք ընել. — ամեն բանս  
Այս Գրգ. տարեշրջանին նուիրատուու-  
թիւնները Լոնտրայէն, Մանչեսթրէն, Ա-  
մերիկայէն, Բարիլէն, Ռուսիայէն, Գահի-  
րէէն, Կ. Պոլսէն և այլ տեղերէ մեծ ու  
փոքր քանակութեամբ հասան. մեր կար-  
գին մենք աւելի ևս պարտակատար ըլլանք.  
մեր աննշան կարծած մի գահեկանն ան-  
գամ, այդ որդիներու սիրոյն և պէտքերուն  
յատկացնելու խնայողութեամբ այժմէն  
պատրաստուինք :

Անոնք կը մեծնան. խնամքը, կրթական  
ամուր ոյժը և դարձող քաղցր գուրգուրան-  
քը՝ որ կը վստահինք թէ՛ որպիսի ներշնչում-  
ներէ կը բղխին, հասուն արթնութիւն մը  
կը ծնուցանին իրենց հոգւոյն մէջ ու քիչ  
ատենէն, այդ ամենէն պատրաստուած կա-  
տարելութեան շնորհալուր յիշատակովը կը  
ներկայանան մեզի շուարթերես, ըսելու թէ՛  
իրենք ժողովրդին են և ժողովուրդը իրենց  
հայր Բարերարը :

Մենք այժմէն առիթ կ'ունենանք հրա-  
պարակա շնորհաւորելու կրթարան-Որբա-  
նոցի Պատ. Վարչութիւնները և ի մասնաւորի  
ստղանդաւոր Տեսուչը, որք ամենքը իրենց  
կարգին գիտեն վերցնել որքերու հոգը և նը-  
կատել անոնց խրաքանչիւրը այնպէս՝ որ-  
պէս իրենց փոքրիկ եղբայրները :

### ԳՐԻԳՈՐ ԶԱՆԾԵԱՆԻ ՄԱՇԸ ԵՒ «ՄՇԱԿ» Ի ՇՐՈՒՄԱՎՈՒԹԻՒՆԸ

(Ի՞նչ ԿՈՐՑՐԻՆՔ)

Մեռաւ Գրիգոր Զանչեան : Մանր, ցուալի  
կորուստ մարդկութեան բոլոր բարեկամների,  
գաղափարական մարտնչողների համար :

Նա գրիչ ունէր, որին սուսած էր բարի  
զգացմունքների զարթոնքնու աստուածային շը-  
նորհքը : Կոտմ է այժմ այդ գրիչը, և ուս-  
սաց գրականութիւնը կարող է կսկիւնով ասել.  
«Մէկն ալ պակասեց» . . .

Կորուստ է Զանչեանի մահը ուսուց գրա-  
կանութեան համար : Անփոխարինելի կորուստ  
է դա մեզ, հայերիս համար : Առանց այդ էլ  
որքան աղքատ ու զրկված էինք տաղանդների,  
երախտաւոր գործիչների կողմից : Գնում են մե-  
զանից մարդիկ, թողնելով իրանց տեղը գա-  
սարկու Յուսաֆատականը այդ տեսակ մահն է :

Ռուս գրականութիւնը Զանչեանի մահով  
նստացնում է իր ազնիւ ռապսուտներին շար-  
քը :  
Եւ այդքանը միայն : Իսկ մեզ համար միայն մէկ  
հոտիկ Զանչեան կայ : Նա էլ մեռաւ. գնաց :  
Նայում էք չորս կողմը, հարցնում էք ձեզ.  
«Ո՞վ պիտի բռնէ նրա տեղը» : Եւ ձեզ պատաս-  
խան չէ տալիս մեռելային լուսութիւնը :

Սկսած այն սեւ օթերից, երբ գազանացած  
մարդու սուրբ բիւրսուոր մերկ ու սովամահ երա-  
խաներ թողուց ցուրտ, անտարբեր կրկնքի սակ,  
Զանչեանի կեանքը շատ անհրաժեշտ, շատ թան-  
կագին գարձաւ մեր ազգի համար, քանի որ այդ  
կեանքը ամբողջապէս նուիրեց մեր անթիւ ու  
անհամար որբուկներին : Յիշեցէք ինչն արեց  
նա : Ոչ սովիներէ կոյտեր ունէր, ոչ իշխանաւո-  
րի դիրք : Մի համեստ գրողի գրիչն էր նրա ձեռ-  
քին և ի՞նչ չէ կարող անել այդ փոքրիկ ու  
թոյլ գործիչը, երբ նրան շարժողը վառվառն  
մարգասիրութիւնն է. սուրբ եռանդը : Նրա հը-  
րատարակած մի հատ գիրքը գնաց փրկելու հա-  
րիւրաւոր որբերին :

Մի հատ գրքով այնքան գործ : Մենք ակա-  
նատես էինք այդ հրաշքին, տեսնում էինք թէ  
ինչպէս այդ գրքով նա հաւեցրեց ցուրտ ու անբա-  
րեկիզ հայի սրտում դրած ժայռը, շարժեց օ-  
տարի գովքը և կաթիլ-կաթիլ ողորմութիւն մու-  
րալով, մարգասիրութեան գունդը բաց արեց գա-  
զանութեան գոհերի ստալ :

Նա դու չէր յոգնել. դեռ գործում էր չը  
յուսանաւովելով, գործում էր հաւատալով մար-  
դուն, երբ մահը խելից նրա ձեռքից որբի դատը  
և գցեց հողի վրայ : Եւ արդեօք այդ գատը նրա  
հետ չէ՞ մտնում սառն գերեզմանի մէջ . . .

Չը կայ ուրիշ Զանչեան : Գոնէ այս հինգ-  
վեց տարիների ընթացքում մեր ականջին չէ հա-  
սել մի ուրիշ ձայն, որ նման լինէր Զանչեանի  
մեզո՞, բայց ողբու և եռանդուն ձայնին : Գա-  
նի՞ քանի՞ անգամ է այդ ձայնը բարձրացել իր-  
բու վրդովմունքի փոթորիկ մարդկային շարու-  
րութեան, անասնո՞ւ լիբը զրպարտութիւնների  
դէմ : Քանի՞ քանի՞ անգամ նա մարգասիրու-  
թեան, արդարութեան զեղեցիկ գասեր է տուել  
այն օտարերկրացիին, որոնց համար մեծ զուար-  
ճութիւն էր հալածել ուրիշներին, ոտի տակ տալ  
նրանց ամենանուիրական հասկացողութիւն-  
ներն անգամ :

Այժմ այդ ձայնը գերեզմանի խորքում  
խեղդուած պիտի մնայ :

Ահա ինչ կորցրինք . . .

### ԱՆՎԱՍՏԱԿԱՆ ԿԵԱՆՔ ( ՀԱՅ ԶԲՈՍԱՋՉԻՎՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԷՆ )

Արեւոյդի մը տարտամ ու ձայնուկ հայեացքով,  
ի դուր կը ջանում բարձրանալ թերթիկները  
հապճեպով մը թղթատեց, անոնց մէջէն որսայու-  
համար բառ մը. այժ, լոկ բառ մը : որ կեանքի  
մը ոչ թէ միայն անուանական, այլ՝ իրական  
արժէքը կ'չնչուէ հանգամանքը ունենայ :

Տեսնո՞ւ, խելացիոր, աչքերս յատած այդ  
լեզուի շտեմարան զրքոյկին վրայ, կ'զգամ թէ՛  
վայրկեան առ վայրկեան ուղիղս կը լարուի ու  
կը քակուի, և ես տակաւին շատ հեռի կը զըտ-  
նուիմ իմ բաղձանքս իրականութեան վերածելէ :  
Ո՞հ, տաժանելի հետազոտութիւն . . .

Մահապարտի մը սօժոյն ու անարիւն դէմ-  
քը ունիմ, որ կարծես պահ մը վերջը վիս ելեք-  
տրական հոտանքով մը սպաննելով, համակ տիտուր  
ու ծարուստենջ սրտիկս և հողիս անմահու-  
թեան վարպտոյրին ցանցառ պատուած մասե-  
րուն մէջ ծրարած պիտի ուզարկին դէպի յա-  
ւիտեանակալութիւն :

Հեծկլանքներս փարտացան, ալ հիմայ  
անցան խիթաբեր ժամերս, որովհետեւ գտայ  
գտայ՝ այդ բառը՝ որ քիչ մնաց ցնորելուս պատ-  
ճառ պիտի ըլլար :

Անգատտական . . .

Կ'ազգայեմ մի՞ ծիծաղէք, չ'ըլլայ որ մեղա-  
գրէք զիս. նազանքներս ձեզ ցոյց տալու նպա-  
տակ չունիմ, և ոչ ալ յոռի հակում մը՝ ձեր  
այնքան օգտակար ժամերը բռնաբարելու : Իմ  
միակ փոփաքս բոտով մը միայն մոլոր կեան-  
քի մը պատկերները ուրուպօճել է արդոյ ըն-  
թերցողաց, զոր այնքան չափեկան կը նկատեմ,  
թերեւս սխալած ըլլամ. տեսնե՞նք :

Անշուշտ մի քիչ անարօրինակ կը գտնէք,  
երբ կը տեսնաք թէ՛ այնպիսի նիւթ մը ընտ-

րած եմ որ պիտի ներկայացնէ հայ դրօսաշրջիկ-  
ներու անգատտական կեանքը. այժմ խիստ ծի-  
ծաղաչարժ տեսարան մը կը պարզուի նամանա-  
ւանդ մեր առջև, երբ ի նկատի կ'ունենանք թէ՛  
քանի որ Հայ ազգը գարեթէ ի վեր ամեն ինչ  
սրտադրած է մարդկային ազգին, սակայն ո՛չ  
գրօսաշրջիկ, և այժմ կեղծնքնոյն իսկ գոյութիւն  
չունեցող բանի մը վրայ ինչ ինչ տեսութիւն-  
ներ բնելու ճիգեր կը թափենք : Իրաւ է թէ՛  
վերջին գաղթականութենէն առաջ, տաճկանացոյս  
մէջ՝ գաւառացուց Տրապիզոնի նաւահանգիստէն  
Պալիս կրթալ գալուէն, իսկ Պօլսեցուց Գապաթա-  
չէն Իւսկիւտար նաւակով անցնելուն մէջ կը  
կայանար գրօսաշրջիկութիւնը և անկէ անդին  
չէր անցնէր. սակայն գաղթականութենէն յետոյ՝  
այդ բանը պարզապէս ընտելացած սովորութիւն  
մը դարձաւ, ճիշդ այն հարուստ Եւրոպացիե-  
րուն նման, որոնք սարուոյն չորս եղանակները  
տարբեր տարբեր միջավայրերու մէջ կ'անցնին :

Միսաժրոյի, Բաֆե, Նասիօնալ, Թրանսալ-  
պերթի և այլ նաւային ընկերութեանց շոգե-  
նուները՝ որոնք աչխ օրին չորս կողմը կ'երթե-  
ւեկեն, այժմ՝ քառասուն և հինգ աստիճան  
ջուրի մէջ խաչքրկած Եանքիներէն, ղէրօյէն  
տասն և մէկ աստիճանի մէջ ստած Գերմանա-  
ցիներէն, թեթեւօլիկ և ճոռմաբան Ֆրանսա-  
ցիներէն, գոնգաղ և պողտրիւն Անգղիացիներ-  
րէն, մաքարոնի սիբանար Իտալացիներէն, և  
արթի պատուաստով ուճացած կուպրիներէն  
գատ, ունին նաեւ աչքերնին և յոնքերնին մը-  
րոտած արեւելքցի հայ ճամբորդներ, որոնք ան-  
գուլ անգուղար իրենց անվերջ քառանկէ կը կա-  
տարեն աշխարհիս մէկ ծայրէն միւսին միւս  
ծայրը :

Ասկից աւելի ինչ կը յուսացուէր Սուլթան  
Համիտէն. բոցաւ լայն սապարէզ մը հայերուն  
և ըսաւ. «Գացէ՛ք այսուհետեւ աշակերտեցէ՛ք.  
Քարոյ՛ցէ՛ք իմ նախճերներս ու աւերումներս» :  
Նոր սապարէզ, նոր կեանք, նոր օր, ու-  
րեմն պէտք էր վայելել այն խօլ քամահաճոյքե-  
րը, որուն մէջ պարունակող բոլոր թաքուն գաւ-  
նութիւնները չէր կարելի նախատեսել : Գաղ-  
թականութեան մէջ գաղթականութիւն : Մի-  
չեւ երբ՝ քանի՞ տարիներ պիտի շարունակէ  
արեօք այս մոլոր կեանքին ընթացքը :

Այս շատ դիւրաւ կըմտնենք թէ՛ ժողո-  
վուրդ մը, ազգ մը, երբ բռնապետ կ'առավարու-  
թեան մը մահացած ճիբաններուն տակ կը ճըզ-  
ուի, և անոր տուած գաղանալին հարուած-  
ներուն ներքեւ կը խոկայ, իր կեանքը պատե-  
ւը, ինչքը կը կոխտուի և կը վտանգուի, իս-  
կոյն պէտք է սանմանադրութեամբ օժտուած եր-  
կիր մը գաղթէ, ուրտեղ կ'առարկալ ազատութիւն  
վայելելով՝ ջանադիր կ'ըլլայ աշխատիլ և իր կո-  
րուստները ձեռք բերել :

Սակայն երբէք չենք կընար մեր խելապա-  
տակին մէջ սեղմնցնել թէ՛ երբ փոխանակ իւր  
գաղթած ազատ երկնքին տակ իւր կրած միսա-  
նորուն հատուցումը ստանալու համար աշխա-  
տելու և ամեն ջանք ի գործ դնելու, փոխանակ  
նիւթական ու բարոյական մեծ ոյժ մը, պաշար  
մը միթերելու, փոխանակ նաեւ իւր գաղթած մի-  
ջավայրին գործունէութեան առողջ միջնորդութիւն  
կազմութեւնը : Ինչպէս նաեւ նոյն երկրին  
բարեբեր, հանգամանքները, առեւտրական հրա-  
պարակը լաւ մը ուսուցնասիրելու, կ'իլլէ յի-  
մար գաղափար մը կ'ունենայ իւր գաղթած երկ-  
րէն ուրիշ երկիր մը գաղթելու, իրը թէ միջա-  
վայրին բարեբեր ու հանգամանքները խիստ  
աննպաստ եղած և իր վրայ ալ վատ տպաւո-  
րութիւն մը թողած ըլլային : Ի՞նչ ընենք, այս  
ալ ճակատագիր է եղեր, որովհետեւ երբէք չենք  
կընար գուշակել թէ 19 և կամ 20րդ լուսաւոր-  
եալ դարուն մէջ սուսաւր քանակութեամբ ժա-  
մանակակից Ռօպինսոններ պիտի ունենայինք,  
որոնք հովանոցը թեւեռնուն տակ և պայտաս-  
կը ձեռքերնին՝ բաղդի անիւլին վրայ նեծած, օլ-  
ոսոյք ըսեր ու կ'երթան :

Կ'երթան. ո՛ւր կ'երթան. երկրագունտին  
կողմ ծակելու և կամ անգունդին հետ սակար-  
կութեան մտնելու կ'երթան :  
Երբէք չ'ենք վարանիւր հաւատարմութիւն վա-  
ղը՝ խուսք մը հայեր Անտաքներու կեանքին հե-  
տեւելով հիւսիսային բեւեռ գաղթեր են : Թերեւս

ԱԶԳ

ուրիշ օր մ'ալ իմանանք թէ այդ խմբակը մեր երկրագունդէն բոլորովին հեռացած է եւ ուրիշ մոլորակի մը մէջ կ'ապրի, որով այն ստուն մարկային ազգին ալ ուրիշ ընելիք չի մնար, բայց եթէ առապելական թուականը իսկոյն բանալ:

Կրկնակի ցաւ մ'է եղած մեզ համար մանաւանդ երբ կը տեսնենք թէ, զասակ մը անճարակներ, որոնք գրեթէ բոլորովին անուս, չ'ունենալով միեւնոյն աստն ոչ գրամ եւ ոչ արհեստ որը իրենց օրապահելը հայթայթելու միջոց մը պիտի ըլլար, յանգզնութիւն կ'ունենան « լէյտի-չէնտ ճէնթըմէններու » ինչպէս նաեւ եւրոպական ուրիշ երկիրներ գաղթել, միջավայրեր ուր մարդկային զարգացումը ու յառաջդիմութիւնը կատարելութեան հասած կը նկատուի, եւ ուր տեղ վերոյիշեալ դասակարգի պատկանող անհասանքը ուրիշ բան չ'են համարուիր, բայց եթէ մարդկութեան մէկ մէկ բն:

Եւ անա թշուառութիւնը ու ազգատու-թիւնը կուգայ անողորմաբար իր բացարձակ « վեր » ն դնել այս տարագրեալներուն վրայ: Այդ դասակարգը չ'զգար երբէք իր ապրելիք միջավայրը, ու կը գաղթէ այնպիսի երկիրներ, որ անկարելի կը դառնայ ապրուստի միջոց մը հայթայթելը: Երբ հայելի մը անէ եւ անոր մէջ նայի ամիջապէս ին երեկուան խաղաղած ապի-ճօսիճօյ ին չարժուաներուն պատկերը ցոլացած պիտի տեսնայ: որով պիտի զգայ իր առած սր-խալ քայլը:

Արդէն ժամանակին արտասահմանեան մա-մուլը քարեխիղճօրէն կատարեց իր գերը, գաղ-թականութեան մասին ինչ ինչ տեսութիւններ ընելով: Թուելով միանգամայն գաղթականու-թեան վնասները, օրինակ լեբելով Լեհաստանի Ռուսմանիոյ, Պուլկարիոյ եւ այլ երկիրներու հայերը, որոնք Մայր երկրէն հեռանալով ոչ թէ միայն կորսնցնէին իրենց հայրենիքը՝ այլ նա-եւ կրօնքն ու լեզուն, որոնք իրենց ազգութիւ-նը կը կազմեն:

Շարք մը օրինակներով եւ պայծառ ու ո-րոշ բացատրութիւններով պարզուեցաւ թէ գաղթականութիւնը մեր ազգին զարգացման ու կործանման միակ գլխաւոր յատկանիշներէն մին է եղած, ուստի պէտք է կարելի եղածին չափ այդ հոսանքին առաջին առնուլ ինչ ինչ միջոց-ներ գտնելով:

Թերեւս հիմա առարկուի թէ գաղթելու ըզ-գալի պէտքն անհրաժեշտ եղած էր, որով ստիպ-ուած հեռացանք մեր երկրէն: Կը համոզուինք երբ ըստի նաեւ թէ մէկ կամ երկու քաղաք երթալով՝ հոն հաստատուած, գործ, առն տեղ կազմակերպած ու նստած ենք, սակայն ընդհա-կանակը ստակալի վնասաբեր կը նկատենք երբ կը տեսնանք թէ, առանց որչա տեղ մը հիմ դնելու եւ կամ ամուր կուսանի մը վրայ յենուլ, ան-զաստական՝ քաղաքէ քաղաք շրջան կ'ընենք, ո-րուն տեւողութիւնը չ'գիտցուիր թէ մինչեւ երբ է: Ահա ճիշտ այդ սխալ քայլն է որ կը վնասէ մեր գոյութեան, որովհետեւ երեք ամիս հոս, չորս ամիս այլուր ժամանակ անցնելով, չ'ենք կարող ո'չ տեղական լեզուն սորվել, ո'չ երկրին բարքերն ու հանգամանքները ինչպէս նաեւ ազ-գութիւնը ու նկարագիրը լաւ մը ուսումնասի-րել, որպէսզի կարող ըլլանք մեր շահերը պաշա-պանել:

Հուսկ ուրեմն, վերջ սանք սոյն մեր ունե-ցած անդաստական կեանքին՝ ծալլենք առ այ-ժմ մեր զբօսաշրջիկի զգեստները եւ մէկ կողմ գնելով զանոնք, աշխատինք ապահով հանգր-ուան մը գտնել եւ կարելի եղած միջոցներով մեր առօրեայ պէտքերն հոգալ: Պէտք է գիտնալ թէ՛ երբէք մեզ համար չ'են եւրոպայի ու Ամե-րիկայի սիրուն ու չքնաղ երկիրները: Ուր որ կը գտնուինք, ջանանք կարեւոր ոյժ մը գո-յացնել միշտ ապագայի համար: Պիտի դայ ժա-մանակը անշուշտ, որով մեր զբօսաշրջիկի ըզ-գեստները հաղած, հովանոց եւ պայուսակի ձե-ռին պիտի գիտնենք Հայրենիք, ուր է մեր նը-ուիրական ապստանարանը:

ՆԵՎՐՈՒՅ

Ընկերութեանս առաջին տարեշրջանին լրանալուն առթիւ Ընդհ. Ժողով պիտի գու-մարուի Օգոստոս 26 ին կիրակի օրը հետե-ւեալ օրակարգով.

- 1. Ընտրութիւն Գործադիր Ժողովոյ:
2. Ընտրութիւն Մայր Դիւանի:

Կը խնդրուի յարգոյ անդամներէն ներ-կայ գտնուիլ սոյն ժողովոյն, որ յ'ամենայն դէպս տեղէ պիտի ունենայ մեծամասնութիւն համարելով ներկայից թիւը: Նաեւ կրնան ներկայանալ այն ամեն ազգայինք որոնք կը փափաքին անդամակցել ընկերութեանս: Ժողովատեղն ու ժամը պիտի հրատարակուին յաջորդ թուոյն մէջ:

Ի գիմաց Լասարան-Ընթերցատուն Ընկե-րութեան Մայր-Դիւանի
Բ. Առնապարտ Բ. Առնապարտ
Ե. ԲերկեՍՏՃԵԱՆ Ա. ՊԱԼԵԱՆ
20 Օգոստ. 1900 Գահիրէ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Շանկհայ 16 Օգոստոս. — Լիհուսկչանկ հեռագիրներ ստացած է որոնք կը հաստա-տեն թէ Զորեքշարթի օրը դաշնակիցները Բէքին մտած են առանց գիմադրութեան: Կը կարծուի թէ կայսրուհին և արքունիքը զինուորաց հետ փախած են:

Բրէթօրիա 16 Օգոստոս. — Զօրավար տը Ուէթ Լորտ Բիշնէրի հետապնդումէն ազատ-ուած և միացած է զօրավար Տըլարէյի:

Բրէթօրիա 17 Օգոստոս. — Զօրավար Ռօպրթօր առևանգելու փորձին հեղինակ-ները դատելու համար, զինուորական ատ-եանը գումարուեցաւ. սկսան դատել նախ և առաջ տեղակալ Բօրտուա որ Օռանժի թնդանթաձիգներու գունդին մէջն էր և որ ինքզինքը յանցաւոր հուշակած է:

Լորտ Ռօպրթօրի և զօրավար Հընդըրի ընդհարումները կարծուածէն աւելի ծանր են 3 Հայկանաւորներ մեռած են և 40 վիրա-ւորներ կան:

Զօրավար տը Ուէթ, շնորհիւ երկիրը ըս-քանչեւապէս ճանչնալուն, յաջողեցաւ Լորտ Բիշնէրի հետապնդումէն ազատել. Պօէր զօրավարը իր գերիները արձակած է ազ-նուօրէն և պահած է միայն սպաները:

Բարիզ 18 Օգոստոս. — Մովակալները կը հաստատեն Բէքինի առումը և դեսպա-նատանց ազատումը:

Բրէթօրիա 18 Օգոստոս. — Լորտ Բիշ-նէր Էլանդս-Ռիվոյի պահակախումբը ազա-տեց բռնի չուէ մը յետոյ:

Կը ծանուցանեն թէ տը Ուէթի զօրքե-րը երթալով կ'աւելնան, հիմա 7000 հոգի ունի իր հրամանին տակ:

Լօրէնսօ Մարգէլ 19 Օգոստոս. — Պօէր աղբիւրէ հեռագիր մը կ'ըսէ թէ տը Ուէթ զօրավարը գերի բռնած է 4000 անգղիացի, 7 թնդանթ:

Բրէթօրիա 19 Օգոստոս. — Տը Ուէթ ա-ռաջարկած է Պէյտըն-Բուելի, որ Գօման-տօնէք կը գտնուի, անձնատուր ըլլալ, անգ-ղիացի զօրավարը պայմաններ պահանջած է:

Եէֆու 20 Օգոստոս. — Գաշնակից զօրքերը կը ումաղկոծեն Կայսերական պա-լատը, ուր կ'ըսեն թէ կայսրուհին կը գտնուի:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Ինչպէս արդէն ծանուցած էինք, մեր նախորդ թուով, Աղէքսանդրիոյ Ս. Պօղոս Պետրոս Եկեղեցւոյն մէջ կիրակի օրը հան-դիսաւոր Ս. Պատարագ և պաշտօն կատար-ուած է ի յեշատակ Իտալիոյ Ումպէրթօ Թա-գաւորին:

Աղէքսանդրիոյ մեր նորընտիր յարգե-լի թղթակիցը սոյն հանդիսի մանրամասնու-թիւններն զրկած է մեզ, որ պիտի հրատա-րակենք յաջորդ թուով:

Տիար Վահան Եկաօֆ, հիւանդ երի-տասարդ մը իր հայրենիքը՝ Պօլիս, զրկելու համար մեր ազգայնոց մէջ հանգանակու-թիւն մը բացած և հետեւեալ արդիւնքը ձեռք բերած ըլլալը մեզ կը հաղորդէ ի հը-րատարակութիւն:

- Մեծապատիւ Տիարք.
Եղբարք Եկաօֆ. 40. Առաքել Փա-
փազեան 10. Լեւոնդ Միրիճանեան 10.
Գառնիկ Միրունեան 10. ՈՅՆ. Մ. 20. ՈՅՆ
Ե. 5. ՈՅՆ Ա. 20. ՈՅՆ Մ. 20. Եագուպ-
եան Եղբարք 20. Իրիգոր Գմբէեան 10.
Մինաս Գմբէեան 10. Վարդան Շամշեան 10
Թ. Ա. Մ. 20. Գէորգ Պէրպէրեան 5. ՈՅՆ
Բ. 5. ՈՅՆ Ա. 20. Մ. Գ. Գ. Եկաւեան 20.
ՈՅՆ Տ. 10. Շահրօզեան Եղբարք 20. Խա-
չիկ Ոսկերչեան 10. ՈՅՆ Ի. 5. ՈՅՆ Գ. 5.
Աղքատախնամ ընկերութիւն 10. ՈՅՆ Թ. Բ.
5. Գէորգ Հացագործեան. 10. Աւետիս Կո-
կիկեան 5. Ա. Մ. Հ. 5. Ն. Բ. 10. Մ
Թ. 10. Համագումար 360 զրչ. ողչ. Եգպ.

ՀԱՅ ՃԱՇԱՐԱՆ

ՄԻՋՐԱՆ ԵՂՔԱՐԻ ԳԱՋԱՆՃԱՆ
ՇԱՐԻԱ ԱՊՈՒ — ՍԱՊԱՀ

Նեով — Իւնի/հրսէյ Դեղարանին դիմացը

Որ և է կերակուր ախորժակամ և սը-
նընդարար ըլլալու համար պէտք է, մսի,
խզի, բանջարեղինաց լաւագոյն տեսակը
ընտրել. այն համոզմամբ որ մսնդարար կե-
րակուրը ստամոքսին կենսատուն է, ով
որ ստամոքսին յարմար կերակուր չ'ընտրեր
ախորժակին թշնամանանք կ'ընէ:

Իրենց կենաց բարեկամ եղողներն կը
հրաւերենք յաճախել մեր վերոյիշեալ
ճաշարանը, վստահ ըլլալով թէ՛ գոհու-
թեամբ պիտի մեկնին:

Գիտենք ԴԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՆ:

186րդ. ՎիճԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԲՐԷՏԻ ՖՅՈՆՍԻՅԷ ԷԺԻԲՍԻԷՆԻ

15 Օգոստոս 1900

Table with 2 columns: Name and Amount. Includes entries like Ա. Պարզե՛ ֆրանք 50,000, Թիւ 365, 372, Հետեւեալք 1,000 ական ֆրանք կը շահին 3 160 95 123 202 022 254 442 325 598...

Գ Ա Ֆ Է Ե Փ Ր Ա Տ

ԱՊՏԻՆ — ՊԱՊ — ԷԼ — ՊՕՍԹԱՆ

Պաշտին եւ նուագածուաց խելի  
Զօրանոցին ճիշտ դիմացը

ՕՉԱՆՆԷՍ ՄԻՄՈՆԵԱՆ ԵՒ  
ԻԱՆԻԷԼ ԼՍՅԱԳՈՐԾԵԱՆ ԸՆԿ .

Պատիւ ունին ծանուցանել Արգոյ ազգայնոց թէ՛ հանդստի ժամերն առողջարար օգ ծծելով զուարճանալու և զովարար ըմպելիներով յոգնած մտքերը կազդուրելու համար, կրնան գիտնել ԵՓՐԱՏ ՄՐՃԱՐԱՆԸ, որ վերոյիշեալ Ընկերութիւնը ամենամեծ հոգածութեամբ և խնամով զարդարած և յաճախորդաց հանգիստը ի նկատի ունենալով պատշաճացոյն վիճակի մը մէջ գրքած է :

ԳԱՅԷ ԵՓՐԱՏ Ի մէջ կը մեծարուին զովարար ըմպելիաց ամենամաքուրները . ընտիր և թարմ օշարակներ, անխարդախ սուրճ և անխառն կաթ :

Հոնք քիմով յաճախորդք գոհ պիտի մնան, գտնելով մաքրութիւն, ճաշակաւոր սպաս և անթերի ծառայութիւն, ամենէն խոտապահանջները գոհացնելու աստիճան :

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

ԿԻՐԱԿԻ 19 ՕԳՈՍՏՈՍ 1900

296	848	601	979	1629	34
4219	7610	4508	2008	5315	6310
7066	5277	7090	690	3056	4111
4979	5793	4013	4456	6962	3866
1111	2032	971	3394	6354	7915

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 19 ՕԳՈՍՏՈՍ 1900

7422	891	8434	9825	792	256
423	7894	360	3337	3201	742
2914	6096	4075	8644	6155	3357
83	7301	3877	3185	4841	7531
	6795	7195	588		

ՀԱՒԱՔԱԾՈՑ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԻԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՉ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աջակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյէն գնել փափաքողներն կամ բաժանորդագրուել ուղղակի, կրնան գիտնել Արշալոյս Ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրէնին :

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՆՈՐԱԿԱԶՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

« ԱՐՇԱԼՈՅՍԻ »

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻՒԼ ԱԶԻՉԻ ՍԿԻՉԲԸ

Օտանկիչե ղեկարանիկն դիմացի փողոցին մեջ .

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7էն մինչև երեկոյեան ժամը 8 :  
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին .

Այցելեալներ, Երչարքերակներ, Գիտեր, Հրաւիրագրեր, Մահազրկեր, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմսեր և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտագնութիւն և չափաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻԿ ԵՆ :

ԿՈՊԷՌՊԵՆԼԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐ .

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՁԱՏՈՒՆ

Տասներկու տարիներ շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած եւ փորձառութիւն ստացած է :

Պոլսոյ մէջ Ապտուլլահ Եղբարց տան, ինչպէս եւ ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքիս մէջ վերջին անգամ Լէքէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Էօզպէֆիյե Շարխա Կանոնի Օթիւ ՇէֆէրՏՍԻ ճիշտ գիմաց թիւ 3 արարթումանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս եւ գուրսը կուսիներ ի հարկին :

Ակրանսիանս բնական մեծութեամբ :  
Կենդանագիրներ ամերիկեցի մեքենայով որոնք երբէք չ'են աւրուիր :

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միկետաթիւր :  
Իւղաներկ եւ ջրաներկ պատկերներ և ըն :  
Լուսանկարի եւ պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի յրթոյ, տեղեկոյրներն եւ ըն :  
Իրեն գիմով յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ :

Տ Հ Ի Մ Ի Զ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Ց

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԷՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահարածիները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ օր և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ Իրահիրէ

ՏՕՐԹ. Ա. Յ. ԲԵՐԵՍՈՒԹԻԱՆ

Ի Շարխա Դոթ-Պէյ, թիւ 20

Իր Ձրի խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն ուրբաթ օրերը կես օրէ առաջ ժամը (ը. ե. ) 9էն 11 որոշած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն գիտնել ուղղակի աղքատ հիւանդներու :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍԱՍՈՒՆ ԵՒ ՁԷՅԹՈՒՆ

Մերունի Տիար Ս. Ֆէլէկեանի վերոյիշեալ հեղինակութեան ԵՐՐՈՐԻ Ֆորման ալ հրատարակուած է :

Բաժանորդագրուելու փափաքողք, ինչպէս արդէն ծանուցուած է, կրնան գիտնել « Արշալոյս » Ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ . ուր հեղինակը կը գտնուի կէս օրէ վերջ ժամը 5-7 :

Գ Ա Ֆ Է Մ Օ Ք Ա

Տիգրան Կոտանեան պատիւ ունի ծանուցանել Արգոյ հասարակութեան թէ՛ վերջերս սկսած է իւր Փաղար-Մրուրի խանութին մէջ պատրաստել Եֆմէնի ստրճին ամենաքնտիր և անխարդախ տեսակէն իրեն գիմով յաճախորդներ օխան 16 զրջ ողջի հաշուով զուտ քաղց պիտի կրնան գնել կըսոյ մէջ ալ ուղղաճանաչութիւն գտնելով :

ՏՕՐԹ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Ապսին Շարխա Գուրբի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ սկուաներ :

Կը գաղթեցնէ վայրկեանապէս սկուայից սուները, ամերիկեան նորագոյն մեթօտով իւր պատրաստած գեղերով :

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն :

Իր լեցուցած սկուաներուն սովորութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ :

Վկայեալ աղքատներու ճրի դարմանում, ամեն օր կէսօրէ ետք ժամը 3-5 :

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ օր և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագին կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործակատար յ'Աղեքսանդրիա :